կառավարութեան ներկայացուցիչների կողմից՝ նախ հեռագրով դիմել Բարձրագոյն իշխանութեան, և դրական կամ բացասական պատասխան ստանալուց յետոյ միայն ձեռնարկել ընտրութեան։

Վահան

ՄԱՅՐ ԱԹՈՌ

— Ամենապատիւ Տ. Տեղակալի առաջարկած Սինոդի անդամացուներից հաստատուած են իրենց պաշտօնում Տ. Տ. Յուսիկ Արքեպիսկոպոս, Սահակ վարդապետ Ամատունի, Մեսրոպ վարդապետ Տ. Մովսիսեան և Մատէոս վարդապետ Մատթէոսեան։

— Կաթուղիկոսական ընտրութեան պատգամաւորներին պատշաճ ընդունելութիւն կատարելու համար կազմուած է մի յանձնաժողով Տ. Ղևոնդ եպիսկոպոսի նախագահութեամբ և Տ. Մատթէոս վ. Մատթէոսեանի, Արիստակէս վարդապետ Զուլոյեանի, Խորէն վարդապետ Մուրադբէգեանի, պ. պ. Միանաս Բերբերեանի և Կ. Մելիք-Շահնազարեանի անդամակցութեամբ։

— Մ. Աթոռի միաբանութեան կողմից կաթուղիկոսական ընտրութեան պատգամաւոր են նշանակուած Տ. Տ. Մեսրոպ, Սուքիաս Գրիգորիս Արքեպիսկոպոսները, Բարդուղիմէոս, Ղևոնդ եպիսկոպոսները և Գրիգորիս ու Հայեակ Արշարունի վարդապետները։

— Մայր Աթոռ են ժամանել Տ. Տ. Գարեգին Արքեպիսկոպոսը՝ Տիֆլիսի առաջնորդը, Մխիթար վարդապետ Աստրախանի ժամանակաւոր կառավարիչը, Կարապետ Ծ. վարդապետ՝ Աստրպատականի Առաջնորդը, Մուշէ վարդապետ՝ Ն. Նախիջևանի և Բեսսարաբիայի թեմական կողմից կաթուղիկոսական ընտրութեան մասնակցելու համար։

— Կաթուղիկոսական ընտրութեան հոգևորական և աշխարհական պատգամաւորները հետզհետէ ժամանում են Մ. Աթոռ։ Հետևեալ համարում կտանք նրանց լիա-

կատար ցուցակը ամբողջ ընտրութեան նկարագրութեան հետ։

— Մ. Աթոռի հոգևոր ճեմարանում դասախօսութիւններ պիտի կարդացուին եկեղեցական, մատենագրական և պատմական նիւթերի մասին կաթուղիկոսական պատգամաւորներին մտաւոր զբօսանք պատճառելու նպատակով։

Մայր Աթոռի «Արարատ» ամսագրի խմբագրութեան։

Բարձրապատիւ Տ. Մեսրոպ վարդապետը իւր «Էջմիածին և հայոց հնագոյն եկեղեցիներ» աշխատութեան մէջ (Աղգ. հանդէս XV և XVI) Զուարթնոց եկեղեցւոյ մասին խօսելիս յայտնում է, որ մանրագնին յատակագիծն գլխաւոր եկեղեցւոյ կազմել է Քրիստափոր Տէր Սարգսեանը, իսկ ընդհանուր յատակագիծը ճարտարապետ Թորամանեանը։ Այս տեղեկութեան հիման վերայ Հ. Գարեգին վարդ. Յովսէփեանը Մառի «О раскопкахъ Ани 1906 г.» աշխատութեան քննադատութեան մէջ (Արարատ, 1908, մարտ) յիշում է, թէ Զուարթնոց եկեղեցւոյ վերակազմութեան երկու նախագծեր են կատարուած։ Այս կէտը առիթ է տուել ուսուցչապետ Մառին իւր «Անւոյ շարք № 2 երես III ծանօթութեան մէջ տարակոյս յայտնել, թէ ինչով պէտք է բացատրել այն հանգամանքը, որ 1905 թ. Մարտի Մայիս համարում պ. Թորամանեանը Զուարթնոցի յատակագիծը հրատարակել է հինգ դռնով, իսկ Մեսրոպ վարդ. նոյն թուին «Էջմիածին և հնագոյն եկեղեցիներ» գրքոյկի մէջ՝ Տէր Սարգսեանի յատակագիծն երեք դռնով. մինչդեռ Հանդէս Աղգ. մէջ նկատւում են յատակագծի վրայ կլիշէում քերուած երկու նոր դռների տեղ Թորամանեանի յատակագծի համաձայն։

Ես իբրև Զուարթնոց եկեղեցւոյ պեղումները կատարող և գործին լաւ տեղեակ, պարտք եմ համարում յանուն ճշմարտութեան յայտնել, որ պ. Թորամանեանն է առաջին անգամ ոչ միայն լրիւ յատակագիծ կազմողը, այլ և ամբողջ շինութեան արտաքին և ներքին մանրագնին վերակազմողը 1904 թ. մարտ—յունիս ամիսներում։

Խաչիկ Ծ. վ Զուարթնոց.

1908 Սեպտ. 10 ին.